



Գյուղատնտեսական Կոոպերատիվներ՝ Ելնելով Միջազգային Փորձից



Ինչ է կոոպերատիվը

Կոոպերատիվը ապրանքներ և ծառայություններ արտադրելու և մատակարարելու նպատակով կամավոր սկզբունքներով ստեղծված տնտեսական միավոր է, որի անդամներն իրականացնում են կառավարումը և համատեղ բաժանում առաջացած ռիսկերն ու շահույթը: Գյուղատնտեսական

արտադրական կոոպերատիվը միավորում է գյուղատնտեսական մթերք արտադրողներին հողի մշակության և տեխնիկայի համատեղ օգտագործման միջոցով գյուղատնտեսական արտադրություն կազմակերպելու նպատակով, և հիմնվում է արտադրության միջոցների և աշխատանքի մասնակի կամ ամբողջական կամատեղման վրա: Չարգացած երկրներում 19-րդ դարի վերջին 20-րդ դարի սկզբին առաջացան առաջին կոոպերատիվները և դրանց թիվը զգալիորեն ավերլացավ 2-րդ համաշխարհային պատերազմից հետո: Եվրոպական երկրները իրար հետ համեմատելու համար դրանք պետք է բաժանել ըստ երեք ցուցանիշների՝ անդամների քանակ, կոոպերատիվների քանակ և ապրանքաշրջանառություն: Կոոպերատիվներում միավորված անդամների քանակով առաջատարը Գերմանիան է, որին հաջորդում է Ավստրիան և Լեհաստանը: Ամենաշատ կոոպերատիվներ կան Ֆրանսիայում, այնուհետև Լեհաստանում և Իտալիայում: Ապրաքաշրջանառության ծավալով առաջին տեղում է Ֆրանսիան, երկրորդում՝ Գերմանիան, իսկ երրորդում՝ Բելգիան:



Գյուղատնտեսական կոոպերատիվների անհրաժեշտությունը

Մարդիկ առաջ սննունդ հայթայթելու համար առաջին քայլերը կատարել են անհատական գործունեություն ծավալելու միջոցով և հաճախ չեն կարողացել դիմակայել դժվար հաղթահարելի գործոնների ազդեցությունը: Աստիճանաբար մարդիկ սկսում են դիմագրավել բնության փորձություններին հանդես գալով համայնքներով, խմբերով: Մարդկանց մեջ տեղի է ունենում աշխատանքի բաշխում խնդիրներ լուծելու համար: Սկզբնական փուլում այս համախումբը ուղղված չի եղել շահ ստանալուն, այլ ողղված է եղել, որպեսզի խմբերը կարողանան գոյատևեն: Համաշխարհային փորձով ապացուցված է, որ փոքր գյուղացիական տնտեսություններն իրացման շուկաների և ֆինանսական ծառայությունների մատչելիությանը կարող են հասնել առավելապես կոոպերացման միջոցով, քանի որ կոոպերատիվների տնտեսական մոդելը հիմնված է կամավորության և հատկապես փոխօգնության սկզբունքների վրա: Ի դեպ, ֆինանսական ճգնաժամի պայմաններում, ի տարբերություն մյուս կառույցների, կոոպերատիվ բանկերը և վարկային միությունները ոչ թե սննկացման են ենթարկվում, այլ հակառակը՝ կարողանում են ընդարձակել իրենց գործունեության շրջանակները, քանի որ այստեղ գործում են ամուր և սերտ սկզբունքներ: Համագործակցության բնորոշ հատկությունն այն է, որ, գործունեություն ծավալելիս միջոցների միավորումը, համատեղումը, ավելի շատ արդյունք են ապահովում, քան այդ



միջոցների առանձին գործունեության արդյունքները միասին վերցրած: Կոոպերատիվները, ինչպես մնացած բիզնես կառույցները, պետք է ճկուն լինեն և հարմարվեն փոփոխվող իրավիճակներին: Ներկայումս ամբողջ աշխարհի կոոպերատիվ կազմակերպությունները կանգնած են նոր տնտեսական և քաղաքական միջավայրին, անդամների պահանջկոտությանը և նոր շուկայական պայմաններ հարմարվելու և ձևափոխվելու մարտահրավերների առջև: Սա նշանակում է, որ անհրաժեշտ է սովորել արտադրության նոր տեխնոլոգիաներ, բիզնեսի կազմակերպման և կառավարման նոր մեթոդներ, գտնել նոր ուղիներ կոոպերատիվի անդամների հավատարմությունը և



նվիրվածությունը պահպանելու և զարգացնելու համար: Սրան կարելի է հասնել ակտիվ մասնակցության, հաղորդակցման և տեղեկատվության փոխանցման միջոցով՝ ընդունելով այն փաստը, որ կոոպերատիվի հիմնական

գործողությունները արդյունավետ կերպով բավարարում են անդամների կարիքները:

Հայաստանի Հանրապետությունում կոոպերատիվ շարժման ընդհանուր բնութագիրը և վիճակագրությունը

Հայաստանի ագրոպարենային ոլորտի առջև ներկայումս ծառայած խնդիրների բնույթից ակնհայտ է, որ գյուղատնտեսության և ագրոգործարարության հաջող զարգացումն էապես պայմանավորված է կոոպերատիվների արմատավորմամբ և զարգացմամբ: Շուկայական հարաբերությունների պայմաններում կոոպերացիան կարող է համակարգել տարբեր գործառույթներ

ինչպես գյուղմթերքի արտադրության, այնպես էլ սպասարկումների, իրացման և մատակարարման գործընթացում: Կոոպերացիայի գաղափարի իրականացումը պայմանավորված է գյուղատնտեսության ոլորտում նշված այնպիսի խնդիրների լուծման անհրաժեշտությամբ, ինչպիսիք են գյուղմթերքի իրացման դժվարությունները, սպասարկումների ոլորտում օգտագործվող հիմնական ռեսուրսների տեխնիկայի, վառելանյութերի, պարարտանյութերի և այլնի ոչ մատչելիությունը:

Հայաստանի Հանրապետությունում բազմաթիվ միջազգային և պետական ծրագրեր և միջոցառումներ ուղղված են եղել խթանելու կոոպերատիվների ձևավորումը և զարգացումը:



**ՀՀ-ում սպառողական կոոպերատիվների քանակը ըստ մարզերի
2013թ. Հունվարի 1-ի դրությամբ**

ՄԱՐԶԵՐ	ԿՈՈՊԵՐԱՏԻՎՆԵՐԻ ՔԱՆԱԿ
Երևան	26
Արագածոտն	32
Արարատ	36
Արմավիր	37
Գեղարքունիք	38
Լոռի	23
Կոտայք	15
Շիրակ	22
Սյունիք	20
Վայոց Ձոր	23
Տավուշ	35
Ընդամենը	307

Սպառողական կոոպերատիվներ ավելի շատ են գրանցվել Արագածոտնի (10.4%), Արարատի (11.7%), Արմավիրի (12%), Գեղարքունիքի (12.4%) և Տավուշի (11.4%) մարզերում:



Հայաստանում գրանցված են 127 ընդհանուր բնույթի գյուղատնտեսական սպառողական կոոպերատիվներ, 22 կաթ

արտադրողների սպառողական կոոպերատիվներ, 40 ոռոգման ջուր
օգտագործողների սպառողական կոոպերատիվներ և 67
արոտօգտագործողների միավորում սպառողական
կոոպերատիվներ:

Կոոպերատիվների ձևավորումը կնպաստի

- Արտադրանքի իրացման բարելավմանը
- Արտադրանքի արտադրման վրա ծախսերի կրճատմանը
- Բերքատվության աճին
- Ժամանակակից տեխնոլոգիաների ներդրմանը
- Գյուղական վայրերում լրացուցիչ աշխատանքների ստեղծմանը



Կոոպերատիվների առավելությունները

- Գյուղատնտեսական կոոպերատիվների անդամների եկամուտն ավելի է, իսկ ծախսը պակաս, քանի որ ծախսերը բաշխվում են մի քանի սուբյեկտների վրա:
- Համատեղ տնտեսական գործունեությամբ կայուն շուկան ավելի մատչելի է:
- Համատեղ մեծածախ գնումներ. ցածր գին անհրաժեշտ ագրո և այլ նյութերի գնման ժամանակ:
- Անհատական գյուղացիների գործունեությունն ընթանում է միայն ցածր տեխնոլոգիական մակարդակի վրա, իսկ ուժերի միավորմամբ հնարավոր է նոր տեխնոլոգիաներ ներդնել:
- Գյուղատնտեսական կոոպերատիվը, որպես միավորում, համարվում է վարկունակ և վարկային ռեսուրսը նրա համար ավելի մատչելի է, քան մեկուսացված սուբյեկտի՝ գյուղացու համար:



ԻՆՉՊԵՍ ՍՏԵՂԾԵԼ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՏԻՎ



ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼ

Անհրաժեշտ է բարձրալեռ տարածաշրջանում առնվազն 3, իսկ մնացած տարածքում՝ առնվազն 5 մարդու միավորում ընդհանուր գաղափարի շուրջ:



ԵՐԿՐՈՐԴ ՔԱՅԼ

Ստեղծվի Կոոպերատիվի Կանոնադրություն:



ԵՐՐՈՐԴ ՔԱՅԼ

Միավորմամբ հետաքրքրված անձինք հայտագրվեն հանրային ռեսուրսում՝ կոոպերատիվի կազմակերպչական ձևով:



ՉՈՐՐՈՐԴ ՔԱՅԼ

Գյուղատնտեսական կոոպերատիվի կարգավիճակ ստանալու դիմում ներկայացնեն «Գյուղատնտեսական Կոոպերատիվների Զարգացման Գործակալություն»:

ՀՀ կոոպերացման հիմնախնդիրները


ՀՀ գյուղատնտեսության արդյունավետության ապահովման, ինչպես նաև կոոպերատիվների ստեղծման ու կայացման հիմնախնդիրներն են՝



Գյուղատնտեսությունում արտադրության խոշորացման, տարաբնույթ կոոպերատիվների գործունեության համար նպաստավոր պայմանների և խթանման միջոցառումների բացակայությունը:



Գյուղատնտեսության արտադրատեխնիկական սպասարկման, մրցակցային, մատչելի ծառայությունների ձևավորման ու զարգացման ոլորտում պետական և մասնավոր հատվածների ոչ լիարժեք համագործակցությունը:



Ագրոպարենային համակարգում արդիական տեխնոլոգիաների, արտադրության կազմակերպման արդյունավետ ձևերի ներդրմանն ուղղված խորհրդատվական և տեղեկատվական համակարգի ներկայիս մակարդակը:




Գյուղատնտեսությունում ապահովագրական գործուն համակարգի ձևավորմանն ուղղված նախադրյալների բացակայությունը, այդ ոլորտի բարձր ռիսկայնությունը:



Գյուղատնտեսությունում նպատակային պետական աջակցության որոշ մեխանիզմների անկատարությունն ու կիրառման սահմանափակ հնարավորությունները:



Գյուղատնտեսական մթերքի իրացման հարցերով զբաղվող համապատասխան ենթակառուցվածքների առկա վիճակը:



Հողային, ջրային, աշխատանքային ռեսուրսների օգտագործման ցածր արդյունավետությունը: Նշված հիմնախնդիրները կարող են լուծում ստանալ իրավաօրենսդրական հիմքի ձևավորման և կատարելագործման, կոոպերատիվ սկզբունքով գործող կառույցների իթանման, տնտեսական լծակների կիրառման և պետական աջակցությամբ ծրագրերի իրականացման միջոցով:

Միջազգային փորձից բխող տեսական հիմնավորումներ

Միջազգային փորձը ցույց է տալիս, որ շուկայական հարաբերությունների պայմաններում, կոռպերացիան նպաստում է ինչպես բուսաբուծական ու անասնապահական մթերքների արտադրության, դրանց պահպանման, վերամշակման, իրացման, այնպես էլ ագրարային ոլորտի բազմաբնույթ սպասարկումների, մատակարարումների, նոր տեխնոլոգիաների ներդրման արդյունավետության բարձրացմանը:

Ներկայումս կոռպերատիվ գործունեության ձևը համարվում է շատ երկրների տնտեսության կազմակերպական կարևորագույն օղակներից մեկը:



Այս հրատարակությունը (խմբագրությունը) ներկայացնում է <<Հայաստանի գյուղական համայնքներում ագրոկենսաբազմազանության պահպանության և օգտագործման միջոցով կենսապայմանների բարելավում>> ծրագրի արդյունքների մի մասը: Սույն Գլոբալ Էկոլոգիական Հիմնադրամի (ԳԷՀ) կողմից աջակցվող ծրագիրը համակարգվում է Բիովերսիթի Ինթերնաշնալի (IPGRI) կողմից ՄԱԿ-ի շրջակա միջավայրի ծրագրի իրականացման աջակցությամբ (UNEP)